

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ.

Բոլոր մարդիկ արդեօք միակերպ լաւ են տեսնում: Ոչ, և սա կախումն ունի աչքի կազմութեան շատ փոքր զանազանութենից: Այն մարդիկ որոնք ունին դուրս ցցուած աչքեր, հեռու գտնված բաները ամենւին չեն տեսնում: Բայց շատ լաւ նկատում են այն, ինչ որ մօտ է և սորա համար կոչվում են «կարճատես»: Իսկ նոքա, որոնք աւելի հարթ աչքեր ունին, ընդհակառակն իւրեանցից հեռու գտնված իրերը լաւ են տեսնում: և վատ են տեսնում այն, ինչ որ իւրեանց աչքի առաջն է: Ուստի կոչվում են «հեռատես»: Վերջապէս կան մարդիկ, որոնք ունին ոչ ուռած, և ոչ հարթ աչքեր, բայց պահպանում են կարեւոր չափաւորութիւն կանոնաւոր տեսողութեան հետ, կարող են լաւ տեսնել միակերպ շատ հեռու գտնված առարկաները և փոքր տիպը թէ մօտից և թէ հեռուից: Այդպիսի տեսողութիւնը առանց պատահական վնասների մեծ մասամբ պահպանվում է մինչև խորին ծերութիւն:

Տեսողութեան այս բոլոր զանազան աստիճանները անցնում են ժառանգաբար կամ սկսվում են ժամանակով յայտնի պատճառներից: Պարճատեսութիւնը ամենից շատ յառաջանում է դպրոցներում, միշտ փոքր տիպեր կարդալուց, վատ լոյսից և գլուխը կախ պահելուց: Երիտասարդական հասակում առհասարակ այն ամեն պարապմունքը, որոնք պահանջում են ուժգին տեսողութիւն, օրինակ, կարը, մանր իրերի կտրելը, տառերի շարելը տպագրութեան համար և ըն. յառաջացնում են կարճատեսութիւն: Այն աչքերը, որոնք կանոնաւոր տեսողութիւն ունին ծերութեան ժամանակ մօտակայ իրերը տեսնելու ընդունակութիւնը կորցնում են և դառնում են հեռատես:

Ի՞նչպէս ուղղելու է արդեօք տեսողութեան պակասութիւնը: Գորա համար հարկաւոր է խուսափել այն ամեն բաներից, որոնք յառաջացնում են կարճատեսութիւն:

Հարկաւոր է յոգնեցնել աչքերը յարատե կարդալուց և աշխատութենից, լաւ է պարապել միայն ցերեկեան պայծառ լոյսով, վարժեցնել աչքերը հեռի առարկաների տեսողութեամբ, չգործածել խմիչքներ, որոնք շատացնում են արիւնի հոսումը դէպի աչքերը և ըն. Եթէ պատահում են կարճատեսներ, կամ հեռատեսներ, նոքա չեն կարող բժշկվիլ ոչ մի միջոցով, թէև հիշտ կերպով կարելի է ուղղել այս պակասութիւնը, գործածելով գոգաւոր կամ ուռուցաւոր ապակիներ, որոնք լաւ ընտրված պիտի լինին նայելով աչքին: Այս ապակիները ընդհանրապէս կոչվում են «ակնոց» և պայծառ լոյսից խուսափելու համար տալիս են նոցա կապտագոյն նսեմութիւն:

Ակնոցների գինը 1՝.—3 մանէթ է և աւելի, նայելով ապակու շինուածքին. այս ապակիներից հարկաւոր է զանազանել պահպանակները, կապոյտ գոյնով ներկված հարթ հասարակ ապակիներով, չափազանց

պայծառ լոյսից պաշտպանվելու համար, սոցա զինը մեծ է:

Ասան արդեօք աչքի ուրիշ հիւանդութիւններն ևս: Աչքը որպէս շափազանց քնքոյշ գործարան ենթարկվումէ շատ յաճախ զանազան տեսակ ցաւերին: որոնց ընդհանրապէս «աչքերի բորբոքումն» անուն ենք տալիս: Այս ցաւերին յաճախ ենթարկվումեն առհասարակ այն մարդիկ, որոնք հարկադրված են աշխատել փոշու մէջ, գործարաններում, որտեղ լինում է կծու գազը և ծուխը և նոքա, որոնք ապրումեն վատ բնակարաններում: նաև նոքա, որոնք աշխատումեն վատ լոյսի առաջ և քն: Աչքը մեզ համար այնպիսի երեւելի գործարան է և այնչափ քնքոյշ է շինված, որ նորան շատ հեշտութեամբ կարելի է խանգարում պատճառել անյարմար բժշկութեամբ: ուստի կարևոր է խիստ զգուշանալ անային միջոցներից, և որչափ կարելի է ամեն անգամ բժշկին պէտքէ զիմել խորհրդի, միայն նորա բացակայութեան ժամանակն այն միջոցները հարկաւոր է գործադրել, որոնց մասին ներքե պիտի խօսվի:

Աչքերի բորբոքման նշաններն ի՞նչ կարող է համարվել արդեօք: Բորբոքման նշաններն են. զգացումն իրր լժէ մի օտար մարմին կայ աչքի կօպերի տակ, տաքութիւն, ցաւ, կարմրութիւն և աչքի արիւնի անօթների մեծանալը:

Հիւանդը չէ կարողանում տանել լոյսին, միշտ սրբումէ աչքերը, որից լժափվումէ մեծ քանակութեամբ տաք արտասուք, զգումէ գլխացաւ և մինչև անգամ տենդային տրամադրութիւն:

2-րդ կամ հինգ օրից յետոյ հոսումէ հիւթ մանաւանդ զիշերը. այս հիւթը չորանումէ և բոլորովին կպնումէ կոպերը. եթէ բորբոքումն սաստիկ է, այն ժամանակ կոպերի վերայ գոյանումեն վէրքեր, որոնք միմեկնեցումեն տեսողութիւնը և մինչև անգամ կարող են բոլորովին փչացնել նորան:

Ի՞նչ պատահարներն են յառաջացնում արդեօք աչքերի բորբոքումը:

Աչքի բորբոքումն յառաջանումէ ցրտից, խիստ լժափանցիկ քամուց, աչքի մէջ ուրիշ մարմնիկների ներկայութենից, սաստիկ լոյսից, երկար ժամանակ ուժգին նայելուց փայլուն իրերի վերայ, և քն:

Եթէ բժիշկը բացակայ է, արդեօք ի՞նչ հնարներ գործ. դնելու է:

Եթէ բորբոքումն յառաջացած է օտար մարմնիկների ներկայութենից աչքի մէջ, հարկաւոր է այն ժամանակ ամենից առաջ հեռացնել նոցա յետոյ խիստ բորբոքման ժամանակ քուլքերին աղբուկ կպցնել և տալ լուծողական, օրը մի քանի անգամ. օրինակ, Ալէքսանդրեան տերեր. (2 զրախմա տերեր 6 ունց ջրի մէջ և փել լժէյի կամ լիմանի հիւթի հետ), (զրախմը — 8 1/2 կ.), Սամ Բէվէնի փոշին 20 զրան մի ումպով (զրախմը — 8 կ.) մամուխի կեղևի կամ շան բեղմի խաշու. (1 ունց կեղև (զինը 3 կ.) 6 ունց ջրի մէջ, ամեն երկու ժամը խմել մի սեղանի զգալ:

Աչքը հարկաւոր է պահպանել լոյսից, պէտքէ զետեղել հիւանդին մուխ սենեակում, որի օդը պէտքէ յաճախ փոխել, նշանակել պահեցողու-

Թիւն, աչքերի վերայ միշտ սառն ջրով քաթան պիտի դնել, միայն խիստ ցաւի և կտրտելու ժամանակ կարելի է ածել մի քանի կաթիլ տորապին, (ծծմբաթթուածի տորապինից մի գրան չորս գրախմա ջրով) (գրանը — 22՝/4) (օրը 3 անգամ)։ Սորա համար ամենից լաւն է հիւանդին նստեցնել աթոռի վերայ, սակաւ ինչ բարձրացնել գլուխը, նայել տալ հակառակողմը և այս ժամանակ կաթեցնել մի քանի կաթիլ գորա համար պատրաստված փետուրի գրչով։

Գրիչը կտրելու է երկու կողմից, փոքր ծակով ծայրը ընկղմելու է կաթիլների մէջ, պինդ սեղմելով աւելի մեծ մատով լայն ծայրը, յետոյ գրիչը մօտեցնելու է աչքին, եթէ այդ ժամանակ վերցնենք սեղմող մատը, հեղուկը ինքն իւրեան կհոսէ։ Սորա համար յարմար ապակէ խողովակ ծախվումէ դեղարանում։ Երբ աչքի բորբոքումը խստից խրօնիկական է դառնում, այն ժամանակ կարելի է գործածել ցինկի կաթիլներ (ծծմբաթթուածի ցինկից մի գրան, երեք գրախմա մաքուր ջրի մէջ. օրը 2 անգ.) և կամ դնել քաթան ամեն մի 1/4 ժամը ծծմբաթթուածի ցինկի երեք գրանը մի ունց ջրի մէջ լուծված։ Արքան աչքացաւը նուազումէ, կարելի է քիչ քիչ լուսացնել սենեակը, հրամայել սննդաբար կերակուրների գործածութիւն, բայց մի քանի ժամանակ հարկաւոր է մոմի լոյսով կարդալու և պարապելու թղլ չտալ։

Ի՞նչ անելու է, առանց կարմրութեան և բորբոքման, աչքերի ցաւած ժամանակ։ Շիւելու չէ աչքերը ձեռով, լուսնալու է մաքուր ջրով և դնելու է աչքի վերայ արձճի ջրով (СВИНЦОВАЯ ВОДА) թրջված քաթան (ունցը մի կ.)։

Ի՞նչ անելու է կոպերի լորձային թաղանթի բորբոքման միջոցին։

Գարձնելու է կոպը, որտեղ կերելի խիստ կարմրութիւն, ցածացնելու է նորան մի փոքր մինչև որ ծածկէ աչքը և քսելու է նորա վերայ գրչի մէջ զրված կապոյտ քարով, յետոյ վրձինով կամ թաշկինակով լուսնալու է ջրով, որ քարի լուծուածքը չմնայ աչքի մէջ։ Նոյնը անելու է և ներքին կոպին. այս գործողութիւնը կրկնելու է ամեն օր մինչև որ բորբոքումն անցնի, բացի սորանից դնելու է սառն քաթան և հոգալու է ստամոքսի կանոնաւորութեան մասին։

Կ. Վ.

ԱԿԱՆՁԻ ՑԱՒԵՐ.

Ի՞նչն է յառաջացնում ականջի ցաւը։

Ականջը ինչպէս լսելիքի գործարան թէև բոլորովին քնքոյշ կազմութիւն ունի, սակայն նոյնչափ վտանգներին չէ ենթարկված որչափ աչքը և իւր ծածկված գրութեան շնորհով չազիւ հիւանդանումէ կողմնակի պատճառներից։ Ականջի ցաւը յառաջանումէ ականջի կեղտի հաւաքումից, ցրտահարութենից, կողմնակի իրերի, օրինակ, միջատների, կեռասի կորիզների, տաշեղների ներկայութենից։

Ի՞նչ անելու է, երբ ականջի կեղտը հաւաքվումէ։

Ասելիքի գործարանը պահանջումէ չափազանց մաքրութիւն առանձնապէս այն մարդիկներէ, որոնք ենթարկւած են լսելու բժութեանը, որովհետեւ մածուցիչ հիւթի հաւաքումն ականջի մէջ, որը անուանւում է ականջի կեղտ, մեծ մասամբ լինումէ ձերերի և անմաքուր մարդիկների խլութեան պատճառ։ Ահապէս հաւաքւելով, ժամանակով զոյացնումէ ամուր խցան, որը երբեմն խիստ զգուար է լինում հեռացնել ականջից առանց բժշկի օգնութեան։ Ամենից առաջ հարկաւոր է նորան փափկացնել, ներս ածելով ականջի մէջ քաթայի ծաղկի տաք խաշուն (ալտէյնի արմատը), օճառի ջուր, քաղցր նուշի խղբ (զրախմբ—5 կ.) կամ զիցէրին (զրախմբ—4 կ.)։ Ականջի ողողումը բաւական ոյժով պիտի լինի և շատ յաճախ, որ կեղտը շուտ փափկանայ, յետոյ հանելու է նորան ականջի քշիորիկով, ծածկելով ականջը մի քանի անգամ բամբակով և բոլորովին մաքրումեն նորան։

Ի՞նչպէս հեռացնելու է արդեօք ականջից կողմնակի մարմինը,

Գիշերը երբ որ ականջի մէջ ընկնումէ որ և իցէ միջատ, հարկաւոր է նորան այնտեղից հեռացնելու փորձ փորձել, լցնելով ականջի մէջ տաք ջուր, կամ ականջի մէջ իւղ ածելով, որի մէջ ընկղմումէ և սատակումէ միջատը, յետոյ հիւանդ ականջի վերայ պառկելու է, որ միջատը կարողանայ ջրի հետ դուրս գալ։ Այս գործողութիւնը քանի մի անգամ կրկնելով, միշտ կարելի է նպատակին հասնել։ Եթէ անզգուշութենից յանկարծ ականջի մէջ ընկաւ մի կողմնակի մարմին, այն ժամանակ հարկաւոր է նոյնպէս նորան հեռացնել փորձել, տաք ջուր ներս ածելով։

Երբ սա չէ օգնում, կարելի է փորձել որ դուրս քաշվի ականջի քրշփփօրով և կամ կոր երկաթի ծանկով, զգուշութեամբ հարկաւոր է տանել ծանկը ականջի կաշու և կողմնակի մարմնի մէջ և թեթեւ կերպով դուրս քաշելու է, դարձնելով ծանկը այնպէս, որ յարմար լինի բռնել դուրս քաշելի մարմինը։ Հարկաւոր է չափազանց սեղմել գործիքով, որովհետեւ սա կարող է բորբոքումն յառաջացնել, եթէ առաջին փորձը չօգնեց, այլ հարկաւոր է շարունակել, որովհետեւ կողմնակի մարմինը կարող է աւելի ներս քաշվել, այլ շուտ պէտքէ կանչել բժշկին, որը ականջի հայելու օգնութեամբ կամ ունելիքով հեշտ կարող է օգնել վտանգին։

Երբ ականջի մէջ բորբոքում կայ, ի՞նչպէս կարելի է իմանալ,

Նա յայտնւումէ խիստ ցաւով, ականջ ծակծկելուց, կարմրութենից, ուռոյցից, տաքութենից, և երբեմն շատ թէ քիչ թանձր հիւթի հոսելուց։

Հարկաւոր է արդեօք բժշկել ականջի բորբոքումը, Անշուշտ, որովհետեւ նա կարող է տարածվել ուղեղի մէջ և կարող է լինել վտանգաւոր հիւանդութեան պատճառ, ուստի անմիջապէս դիմելու է բժշկի օգնութեան։ Բժշկի բացակայութեան ժամանակ, ականջի ետեւը տղրուկ կպցնելու է, ընդունելու է միշտ լուծողական և ողողելու է ականջը երկու ժամը մի ան-

դամ՝ դատի ծաղկի տաք խաշուով և կամ մեկոնի իւղով, (Սպիտակ մեկոնի գլուխները քաղումեն երբ դեռ հասած չեն և լի են հիւթով, չորացնումեն և հարկաւոր դէպքում շինումեն նորանից խաշու վեց դրամամա 1 $\frac{1}{2}$, գրվանդայ ջրի մէջ, ականջը լուանալու համար դորձածելով այս խաշուն իրրեւ մի հանգստացուցիչ միջոց)։

Ականջին կարելի է դնել նաև սպեղանի վշի սերմից, և ոտները տաք ջրի մէջ դնել. եթէ ականջից սկսումէ հոսել, հարկաւոր է ցինկի տաք լուծուածքով ողողել (մի դրան ձծմբածիթուածային ցինկից մի ունց ջրի հետ)։

Խոն անելու է, երբ ականջի մէջ ուռոյց կայ։

Սպասելու է մինչև որ նա հասնի և ինքն ըստ ինքեան պատուի, ոչինչ չգործածելով սորա համար բացի ծառի իւղով թրջված բամբակից, որը պահպանելով ուռոյցը օդի ազդեցութենից, միևնոյն ժամանակ օգնումէ նորա շուտ հասնելուն և պատուիլուն։

Կ. Վ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՌԹԵԱՆ ՀԻՆ ԱՒԵՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ, ԱՐԱՐԵՏ, (Արարատ, 1879, դեկտեմբեր)։

Նախընթաց գլխում մենք խօսեցանք, որ Հայաստանի և Հայերի մասին եղած հնագոյն զրոյցները հասած են մեզ Խորենացու պատմութենից, որ կապրէր Ե. դարի կէսում Քրիստոսի ծննդից յետոյ, Խորենացին իւր պատմութիւնը կսկսէ Նոյից (գիրք Բ. զԼ. Ե.) և նորանից յառաջ կրերէ Հայերի ազգաբանութիւնը Նոյ, Յ-բէ, Գ-բէ, Թ-բէ, Թորգոմ Հայերի առաջին ցեղապետներն են։ Նա կասէ, որ այս ազգաբանութիւնը քաղած է հին ճշմարտապատում պատմիչներից (?), Նոյի թոռան որդուն Թիրատի վերաբերմամբ, որը Մենդոց զբքի մէջ նորա թոռը (Թ-բէ) կկոչվի, նա մատնանիշ կլինի մի դիտնական և բազմաճուտ Ասորու վերայ (?), դարձեալ նորա անունը չյիշելով։ Յետոյ հետեւեալ կարգով յառաջ կրերէ նա Թորգոմից սերած սերունդի ազգաբանական շարքը, որից սերվեցաւ հայկական ազգը. «Հ-բէ, Ա-բէ, Ա-բէ, Ա-բէ, Գ-բէ, Հ-բէ, Ա-բէ, Ա-բէ, Գ-բէ»։ Ընդ ամենը Յարեթից 12 սերունդ, այս տեղեկութիւնը, ինչպէս ինքն Խորենացին կասէ, քաղած է Արիւղենոսից, առաջագոյն, որ չէ յիշատակում Հայկի մասին, ինչպէս կերելի նախընթաց գլխում յառաջ բերված նոյն իսկ քաղուածից։ Այսպէս հասցնելով իւր ազգի ազգաբանութիւնը օտար պատմիչների համաձայն մինչև Նոյ, Խորենացին մանրամասնութիւնների համար կդառնայ դէպի իւր գլխաւոր պատմիչը, Մար - Աբաս - Վատինա Ասորին (զԼ. Թ. — ԺԵ.) և կքաղէ նորանից այն տեղեկութիւնները, որոնք նա հարկաւոր կհամարի հաղորդել ապագայ սերունդին։ Մենք համառօտապէս կարտադրենք այս գլուխների բովանդակութիւնը։